

# ՌՈՒՍԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐԻ ԻՄԱՍՏԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

## THE SEMANTIC SHIFT OF LOANWORDS FROM RUSSIAN IN THE KARABAKH DIALECT

## СЕМАНТИЧЕСКИЕ ИЗМЕНЕНИЯ ЗАИМСТВОВАННЫХ ИЗ РУССКОГО ЯЗЫКА СЛОВ В КАРАБАХСКОМ ДИАЛЕКТЕ

Շողեր Մինասյան<sup>1</sup>, Արմեն Սարգսյան<sup>2\*</sup>  
Shogher Minasyan<sup>1</sup>, Armen Sargsyan<sup>2\*</sup>  
Шогер Минасян<sup>1</sup>, Армен Саргсян<sup>2\*</sup>

<sup>1</sup> Լեզվի ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան  
Institute of Language, National Academy of Sciences, Armenia  
Институт языка, Национальная академия наук, Армения

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, Հայաստան  
Armenian State University of Economics, Armenia  
Армянский государственный экономический университет, Армения

<sup>2</sup> Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան  
Institute of Archaeology and Ethnography, National Academy of Sciences, Armenia  
Институт археологии и этнографии, Национальная академия наук, Армения

Լեզվի ինստիտուտ, Գիտությունների ազգային ակադեմիա, Հայաստան  
Institute of Language, National Academy of Sciences, Armenia  
Институт языка, Национальная академия наук, Армения

\* Գրագրություն վարող հեղինակ՝ armen.sargsyan@iae.am  
Author for correspondence: armen.sargsyan@iae.am  
Автор, ведущий корреспонденцию: armen.sargsyan@iae.am

Հեղինակների ներդրումը. ՇՄ – գաղափար, նախնական տեքստ; ԱՍ – խմբագրում  
Author contrbutios: ShM – concertualization, writing original draft; AS – editing  
Вклад авторов: ШМ – концептуализация, написание текста; АС – редактирование

The authors declare no competing interests  
Հեղինակները հայտարարում են շահերի բախման բացակայության մասին  
Авторы заявляют об отсутствии конфликта интересов

Received: 20.11.2025; Revised: 06.02.2026; Accepted: 14.04.2026  
Ներկայացվել է՝ 20.11.2025; գրախոսվել է՝ 06.02.2026; ընդունվել է՝ 14.04.2026  
Представлено: 20.11.2025; рецензировано: 06.02.2026; принято: 14.04.2026

© The Author(s), 2026. This article is distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence  
© Հեղինակ(ներ), 2026: Հոդվածը տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով  
© Автор(ы), 2026. Статья распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2026.1-138

*Ամփոփում* – Ղարաբաղի բարբառը հայերենի ամենատարածված և կենսունակ կենդանի բարբառներից է: Որպես հաղորդակցման միջոց՝ այն սպասարկում է Լեռնային Ղարաբաղի հայերին, որոնք 2023 թ. պատերազմից հետո ստիպված տեղահանվել և վերաբնակություն են հաստատել Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և աշխարհի այլ երկրների հարյուրավոր բնակավայրերում: Ըստ հայերենի բարբառների ձևաբանական դասակարգման՝ այն ընդգրկվում է *-ում* ճյուղի, ըստ հնչյունական դասակարգման՝ առաջին տեղաշարժի ենթարկված, իսկ բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման համաձայն՝ արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիսարևելյան միջբարբառախմբի մեջ: Որոշ լեզվաբաններ, հաշվի առնելով սահմանական ներկայի և անցյալի անկատարի կազմությունը՝ *ս* վերջավորությամբ դերբայով, առանձին բարբառներ են համարում Ղարաբաղի բարբառի Հաղորդի և Շաղախի ենթաբարբառները, սակայն իրականում դրանք մայր բարբառից բարբառային սահմաններ գծող տարբերություններ չունեն: Ղարաբաղի բարբառի բառապաշարում զգալի թիվ են կազմում ռուսերենից (ներառյալ ռուսերենի միջնորդությամբ այլ, հատկապես եվրոպական լեզուներից) փոխառյալ բառերը, ինչն ամենից առաջ կապվում է 1822 թ. Ղարաբաղի խանության վերացման և Ղարաբաղի պրովինցիայի ձևավորման հետ, որը 1840 թ. մտնում է Կասպիական մարզի, իսկ 1868–1917 թթ.՝ ներառվում Ելիզավետպոլի նահանգի կազմում: Ռուսերենից փոխառյալ բառերի իմաստափոխության հետևանքով տեղի են ունեցել բառիմաստի նեղացում, ընդլայնում և փոխհաջորդում: Առավել տարածված է բառիմաստի նեղացման իրողությունը, ինչը ենթադրելի է, իսկ ընդլայնումը տեղի է ունեցել նոր՝ փոխաբերական իմաստի առաջացմամբ: Իմաստափոխությունը առաջացել է նմանության (արտաքին ու ներքին) և գործառույթի հիմունքով: Իմաստափոխության առանձին դրսևորում են փոխառյալ բաղադրիչով դարձվածները, որոնք վերաիմաստավորված են, և որոնց իմաստները առավել կամ պակաս չափով կախված են բաղադրիչների իմաստներից:

*Abstract* – The Karabakh dialect is one of the most vital and widely used living dialects of the Armenian language. It serves the Armenians of Nagorno-Karabakh, who, after the 2023 war, were displaced and resettled in hundreds of localities across the Republic of Armenia, the Russian Federation, and several other countries. According to the morphological classification of Armenian dialects, it belongs to the *-um* branch; according to phonetic classification, it is a dialect that has undergone the first consonant shift; and according to multifeature statistical classification, it is included in the Eastern dialectal group – within the Karabakh-Shamakhi or far Northeastern interdialectal cluster. Some linguists, considering the structure of the present tense and the imperfect forms built with participles ending in *-s*, regard the Hadrut and Shaghakh subdialects as separate dialects. In reality, however, they show no differences that would allow them to be delineated from the parent dialect. The vocabulary of the Karabakh dialect is significantly influenced by borrowings from the Russian language (including words borrowed through Russian from other, especially European, languages). This phenomenon is primarily linked to the abolition of the Karabakh Khanate in 1822 and the formation of the Karabakh Province, which in 1840 became part of the Caspian region and, between 1868–1917, was included in the Elizavetpol Governorate. As a result of semantic changes in Russian loanwords, narrowing, broadening, and shift of meaning have occurred. The narrowing of meaning is the most common phenomenon, which is quite natural, while broadening has taken place through the emergence of new metaphorical meanings. Semantic change has arisen based on both external and internal similarity as well as on functional grounds. A sepa-

rate manifestation of semantic change can be observed in idioms containing borrowed components, which have been reinterpreted, their meanings depending to a greater or lesser extent on the meanings of their components.

*Аннотация* – Карабахский диалект является одним из наиболее жизнеспособных и распространённых живых диалектов армянского языка. Им пользуется армянское население Нагорного Карабаха, которое после войны 2023 г. вынуждено было покинуть родные места и расселиться в сотнях населённых пунктов Республики Армения, Российской Федерации и ряда других стран. Согласно морфологической классификации армянских диалектов, он относится к -ум ветви; согласно фонетической классификации – к диалектам, подвергшимся первому передвижению согласных; а в многофакторной статистической классификации включается в восточную группу – в карабахско-шамахинский или крайний восточный междиалектный ареал. Некоторые лингвисты, учитывая построение настоящего времени и имперфекта с употреблением причастий на – с, рассматривают гадрутский и шагахский говоры как отдельные диалекты, однако фактически они не имеют отличий, позволяющих отделять их от основного диалекта. В лексике карабахского диалекта значительное место занимают заимствования из русского языка (в том числе вошедшие в русскую лексику заимствования из других, преимущественно европейских языков). Это связано прежде всего с упразднением Карабахского ханства в 1822 году и образованием Карабахской провинции, которая в 1840 году вошла в состав Каспийской области, а в 1868–1917 гг. – в состав Елизаветпольской губернии. В результате семантических изменений русских заимствований сузилось, расширилось и тем самым изменилось значение слов. Наиболее распространённым является сужение значения, что вполне естественно. Расширение же происходило за счет обогащения слов новым смыслом. Семантические изменения возникали на основе внешнего и внутреннего сходства, а также по функциональному признаку. Отдельным проявлением семантических изменений являются фразеологизмы с заимствованными компонентами, имеющими другой смысл, что в той или иной мере зависит от семантики их составляющих.

Հիմնարաներ – բարբառ, փոխառություններ, իմաստաբանություն, դարձվածներ:

Keywords – dialect, loanwords, semantics, idioms.

Ключевые слова – диалект, заимствования, семантика, фразеологизмы.

### Ներածություն

Բարբառի՝ որպես լեզվի տարածական տարբերակի լեզվական իրողությունների մեծ մասը պայմանավորված է մայր լեզվի հետ ունեցած ծագումնաբանական կապով: Դրան զուգահեռ յուրաքանչյուր բարբառ ունի իր հնչյունական, բառապաշարային և քերականական տարբերությունները, որոնք առաջին հերթին արտահայտվում են բառապաշարային մակարդակում: Ենթարկվելով արտաքին ազդեցություններին՝ բարբառը բառեր է փոխառում այն լեզուներից, որոնք անմիջական առնչություն ունեն իր հետ:

Փոխառությունները փոխառու լեզվից փոխառու լեզվին անցած օտար բառերն են. դրանք իրենց համարժեքները չունեն փոխառու լեզվում, բացատրվում են այդ լեզվով (Ավետիսյան, Թեյլան, Սարգսյան 2020, 108): Հայերենի յուրա-

քանչյուր բարբառ ունի տարբեր լեզուներից փոխառյալ բազմաթիվ բառեր: Որպես բանավոր հաղորդակցմանը ծառայող կենդանի լեզու՝ բարբառի բառերը ևս ենթարկվում են իմաստային փոփոխության: Դա վերաբերում է նաև տվյալ բարբառում առկա փոխառյալ բառերին, որոնք, պայմանավորված լեզվական և արտալեզվական մի շարք գործոններով, կարող են տարբեր իմաստներ և գործածություն ունենալ կամ ձեռք բերել:

### **Ղարաբաղի բարբառի տեղը հայերենի բարբառների շարքում**

Ղարաբաղի բարբառը հայերենի ամենակենսունակ ու տարածված կենդանի բարբառներից է, որով հաղորդակցվում են Լեռնային Ղարաբաղի հայերը, որոնք 2023 թ. պատերազմից հետո տեղահանվել և վերաբնակություն են հաստատել Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության և աշխարհի այլ երկրների հարյուրավոր բնակավայրերում (Սարգսյան, Մինասյան 2025, 57): Հայերենի բարբառների ձևաբանական դասակարգման համաձայն՝ այն ընդգրկվում է *-ում* ճյուղի (Աճառեան 1911, 54), ըստ հնչյունական դասակարգման՝ առաջին տեղաշարժի ենթարկված (Ղարիբյան 1947, 30), իսկ բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման համաձայն՝ արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիսարևելյան միջբարբառախմբի մեջ (Ջահուկյան 1972, 136): Բարբառի մասին առաջին վկայությունը թողել է VIII դ. քերական Ստեփանոս Սյունեցին (Адонц 1915, 187): Նույնը կրկնել է XIV դ. բանաստեղծ, քերական Հովհաննես Երզնկացին (Патканов 1869, 9), սակայն առաջին ուսումնասիրությունը 1869 թ. կատարել է Սանկտ-Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Քերովբե Պատկանովը (Патканов 1869, 55–73)՝ սկզբում տեղադրելով բարբառով գրառված որոշ նյութեր, այնուհետև քննելով նրա հնչյունական, բառապաշարային ու քերականական մի շարք առանձնահատկություններ: Հետագայում բարբառին անդրադարձել են տասնյակ լեզվաբաններ (Սարգսյան 2019): Կարո Դավթյանը լեզվաբանական աշխարհագրության մեթոդով ներկայացրել է Լեռնային Ղարաբաղի տարածքի բոլոր խոսվածքների հնչյունաքերականական օրինաչափությունները (Դավթյան 1966), իսկ Արմեն Սարգսյանը՝ կազմել Ղարաբաղի բարբառի ընդարձակ բառարանը (Սարգսյան 2013): Ղարաբաղի բարբառի մեջ են ընդգրկվում նաև Հաղորդի և Շաղախի ենթաբարբառները (Ջահուկյան 1972, 136; Սարգսյան 2009, 86–88), չնայած որոշ լեզվաբաններ դրանք համարում են առանձին բարբառներ (Ղարիբյան 1939, 50–58, 107–127; Պողոսյան 1965, 5–9; Դավթյան 1966, 236–296):

Ղարաբաղի բարբառում զգալի թիվ են կազմում պարսկերենից, արաբերենից, թյուրքական լեզուներից արված փոխառությունները, սակայն առավել շատ են ռուսերենից անցած բառերը, որոնց (ներառյալ ռուսերենի միջնորդությամբ այլ, հատկապես եվրոպական լեզուներից կատարված փոխառությունները) թիվը հասնում է շուրջ 2500-ի (Սարգսյան 2013), ինչն ամենից առաջ կապվում է 1822 թ. Ղարաբաղի խանության վերացման և Ղարաբաղի պրովինցիայի ձևավորման հետ, որը 1840 թ. մտնում է Կասպիական մարզի, իսկ 1868–

1917 թթ.՝ ներառվում Ելիզավետպոլի նահանգի կազմում: Անշուշտ, այդ գործընթացում կարևոր դեր է խաղացել նաև XIX դարի կեսերից երկրամասում ռուսական զինվորական ստորաբաժանումների, իսկ խորհրդային տարիներին մի շարք բնակավայրերում ռուսական դպրոցների առկայությունը:

### **Ռուսերենից փոխառյալ բառերի իմաստափոխության տեսակները**

Համեմատելով ռուսերենից փոխառյալ բառերի իմաստները Ղարաբաղի բարբառում՝ կարելի է առանձնացնել հետևյալ խմբերը.

ա) բառեր, որոնք ունեն նույն իմաստը, այսինքն՝ իմաստային որևէ փոփոխության չեն ենթարկվել,

բ) բառեր, որոնք բառիմաստային նեղացում են ունեցել, ընդ որում, այս բառերի քանակը ամենամեծն է,

գ) բառեր, որոնք բառիմաստի ընդլայնում են ունեցել,

դ) բառեր, որոնք ձեռք են բերել նոր իմաստ:

Բարբառի՝ ռուսերենում ունեցած նույն իմաստով գործածվող բառերը կարող են լինել մենիմաստ ու բազմիմաստ: Մենիմաստ են՝ *аборт – արօրտ* (վիժում), *автобус – ավիօբուս/ավիօբուս* (ավտոբուս), *агитация – ագիտացյա* (որևէ նպատակով լայն զանգվածների մեջ տարվող քաջալերիչ, գովաբանական պաշտպանություն), *агроном – ագրանոմ* (գյուղատնտես), *адвокат – ադվակատ* (փաստաբան), *акация – ագացի* (թիթեռնածաղկավորների ընտանիքին պատկանող ծառ՝ ակացիա), *аккордеон – ակարդյոն* (երաժշտական գործիք՝ ակորդեոն), *аккуратный – ակուրատնի* (կոկիկ, մաքրասեր, կանոնավոր, կարգապահ), *акusherка – ակուշերկա* (մանկաբարձուհի), *алименты – ալիմենտ* (ապրուստի միջոց, որ ըստ օրենքի տրվում է ընտանիքի՝ առանձին ապրող անաշխատունակ անդամներին խնամակալների կողմից), *алкаш – ալկաշ* (հարբեցող), *алюминий – ալյումին* (ալյումին), *асбест – ազբեստ* (հրակայուն և թթվադիմացկուն հանքատեսակ), *варенье – վարեննի* (մուրաբա), *воротник – վարադնիկ* (օձիք), *желудок – ժլուդոկ* (ստամոքս), *майка – մայկա* (անթև վերնաշապիկ), *образованный – օբրազովաննի* (կրթված), *объявление – օբյավլեննի/օբիվլեննի* (հայտարարություն), *обычный – օբչնի* (սովորական), *одеколон – ադիկալոն* (տղամարդու օձանելիք՝ օդեկոլոն), *одеяло – օդյալ* (ծածկոց), *олифа – օլիֆ* (օլիֆ), *отпуск – օտպուսկ* (արձակուրդ), *печь – փիչ* (վառարան), *плащ – պլաշ* (անջրանցիկ թիկնոց), *поднос – պադնոս/պադնոց* (սկուտեղ, մատուցարան), *пожар – պաժար* (հրդեհ), *помидор – պամիդոր/պամադոր* (պոմիդոր, լոլիկ), *центральный – ջենտրալնի* (կենտրոնում գտնվող՝ գործող, կենտրոնական), *шофер – շօֆեր* (ավտովարորդ) և այլն (բոլոր օրինակները բերվում են ըստ Ա. Սարգսյանի (Սարգսյան 2013), Ա. Սարգսյանի և Շ. Մինասյանի (Սարգսյան, Մինասյան 2017), Ս. Օժեգովի (Ожегов 2018) բառարանների):

Սրանցից որոշ չափով տարբերվում են այն բառերը, որոնք ռուսերենում ունեն նաև փոխաբերական իմաստ, որը բարբառում բացակայում է: Այսպես, *подарок – պադարկա* (ընծա, նվեր) բառը ռուսերենում փոխաբերաբար ունի

նաև լավ, հաճելի բան, *порода* – պարօդ (ընտիր տեսակ՝ ցեղ (մրգի, բանջարեղենի, կենդանու և այլն) բառը՝ մյուսներից ներքին էությանը տարբերվող տեսակ, *пульс* – պուլս (սրտի զարկ, զարկերակ) բառը՝ կյանքի ընթացք, *ինչ-որ բանի շարժում* իմաստը:

Հետաքրքիր է, որ փոխառյալ բառերի մեջ կան նաև իրենց բոլոր իմաստներով համընկնող բազմիմաստ բառեր, ինչպես՝ *анекдот* – *անիկդոտ* (1. կարճ պատմություն սրամիտ և զվարճալի դեպքի մասին, 2. *փխբ.* մտացածին, անհավանական բան), *авторитет* – *ափտարիտետ* (1. հեղինակություն, 2. հեղինակություն վայելող անձ), *военный* – *վայէննի* (1. զինվորին՝ զինճառայողին հատուկ՝ վերաբերող, 2. զորքին՝ բանակին հատուկ՝ վերաբերող, զինվորական ծառայության հետ կապված, 3. պատերազմին հատուկ՝ վերաբերող, ռազմական, 4. զինվորական ծառայության մեջ գտնվող անձ, զինճառայող), *копейка* – *կապէկ* (1. դրամական միավոր Խորհրդային Միությունում՝ կոպեկ, 2. այդ արժողությամբ մետաղյա դրամ), *номер* – *նումեր* (1. թիվ կամ թվանշան, որ ցույց է տալիս առարկայի հաջորդական կարգը նմանների շարքում, 2. առանձին սենյակ հյուրանոցում, բաղնիքում և այլն, 3. անսպասելի, տարօրինակ արարք, արտահայտություն, վարմունք, 4. չափս, չափ), *осторожный* – *աստարոժնի* (1. զգույշ, ուշադիր, 2. զգուշորեն), *первый* – *պերվի* (1. մեկ քանակական թվականի դասականը՝ առաջին, 2. ըստ կարգի՝ բոլորին նախորդողը, սկզբինը, 3. ըստ ժամանակի՝ ամենաիինը, նախնականը, 4. *փխբ.* ամենալավը, գովելին, առաջնակարգ), *пожарный* – *պաժառնի* (1. հրշեջ, հրդեհը մարող՝ հանագնող, 2. հրշեջ խմբի ծառայող), *праздник* – *պրոռազնիզ/պրրազնիզ* (1. հանդիսավոր օր, տոն, 2. *փխբ.* բուռն ուրախություն, բերկրանք, ցնծություն), *процент* – *պրրացէնտ* (1. ամբողջական թվի մեկ հարյուրերորդական մաս, 2. որևէ բանի քանակ, որ չափվում է որպես միավոր ընդունված որևէ բանի հարյուրերորդական մասով, 3. այն վարձը, որ ստանում է վարկատուն՝ պարտատերը պարտք տված դրամի դիմաց), *холостой* – *խալաստոյ* (1. չլիցքավորված, 2. չամուսնացած), *ваз* – *շագ* (1. ոտքի մեկ շարժում, քայլափոխ, 2. մի քայլաչափ տարածություն, 3. շաշկի և շախմատ խաղերի մեջ խաղացողների ամեն մի խաղը՝ քարի հերթական շարժումը) և այլն:

Բառիմաստի նեղացումը, որը իմաստային բոլոր փոփոխություններից ամենատարածվածն է, ենթադրում է փոխառյալ բառի իմաստների կորուստ, այսինքն՝ եթե փոխատու լեզվում բառը բազմիմաստ է, ապա փոխառելու ժամանակ հաճախ վերցվում է նրա իմաստներից մեկը:

Կան բառիմաստի նեղացման տարբեր տեսակներ: Հնարավոր է, որ փոխառյալ բառը արտահայտի լայն հասկացություն, իսկ բարբառը փոխառի դրա իմաստներից որևէ մեկը: Օրինակ՝ *окошко* բառը ռուսերենում ունի հետևյալ իմաստները՝ 1. *պափի մեջ անցք լույսի և օդի համար նախատեսված, նաև ապակիով շրջանակ՝ այդ անցքը փակելու համար*, 2. *պափի, միջնորմի ինչ-որ բան առանձնացնող անցք*, 3. *ինչ-որ բանում անցք*: Բարբառում *ակուշկա* բառը գործածվում է միայն առաջին իմաստով: *Чашка* բառը ռուսերենում ունի 1. *ինչ-որ*

բան խմելու համար նախատեսված բռնակով անոթ, 2. կիսաշրջանաձև առարկա տարբեր սարքավորումներում, 3. կշեռքի կլոր և հարթ ափսե իմաստները: Բարբառում գործածվում է միայն թեյ կամ սուրճ խմելու բաժակ իմաստով, այսինքն՝ ռուսերենի առաջին իմաստն էլ լրիվությամբ չի պահպանվել: Կորմիկր անէլ հարադրության անվանական բաղադրիչը ռուսերեն *кормить* բառն է, որն ունի «կերակրել» իմաստը, մինչդեռ հարադրության արտահայտած *կերակրել* իմաստը բարբառում միայն կենդանիներին է վերաբերում: *Авария* բառը նշանակում է *ցանկացած մեխանիզմների շարքից դուրս գալը*, իսկ բարբառում միայն տրանսպորտային փոխադրամիջոցների ճանապարհատրանսպորտային միջադեպերն է ենթադրում:

Հատկանշական է, որ իմաստի նեղացման ենթարկված բառերը մեծ մասամբ պահպանում են ռուսերենի առաջին իմաստը, ինչը տրամաբանական է. բառի առաջին իմաստը հիմնականն է: Այդպիսի բառերից են՝ *аптека* – *ափսեզգ* (դեղատուն), *днюдо* – *բըյուդ* (ափսե), *бочка* – *պոժկա* (տակառ), *герой* – *գերոյ* (հերոս), *гардероб* – *գարդիոր* (զգեստապահարան), *институт* – *ինիստիտուտ* (բարձրագույն ուսումնական հաստատություն՝ ինստիտուտ), *кабинет* – *կաբինէտ* (առանձնասենյակ, աշխատասենյակ), *клетка* – *կըլէթկա* (մետաղյա կամ փայտե ձողերով սարքած պատերով արկղանման հարմարանք), *нарочно* – *նարոշնի* (դիտմամբ), *посуда* – *պատուդ* (տարբեր տեսակի, հատկապես ապակյա ամանեղեն), *приказ* – *պրիկազ* (կարգադրություն, հրաման), *фармак* – *փարթուկ* (զոզնոց), *характер* – *խարաքտեր* (բնավորություն), *чайник* – *չանիգ* (թեյնիկ), *вид* – *վիդ* (արտաքին տեսք):

Կան բառեր, որոնք, բացի առաջին իմաստից, գործածվում են նաև երկրորդ՝ *баня* – *բանյա* (1. բաղնիք, 2. *փխբ.* խիստ շոգ՝ խեղդով տեղ), *секрет* – *սէկրէտ* (1. գաղտնիք, 2. որևէ բան կատարելու ձևը), *судья* – *սուդ(ի)յա* (1. որևէ բան վճռող անձ, 2. դատավոր), երրորդ՝ *машина* – *մաշին* (1. որևէ կարգի օգտակար աշխատանք կատարող մեխանիզմ, մեքենա, 2. առանց խափանման ու առանց սխալների աշխատող, 3. ավտոմեքենա) *полный* – *պոլնի* (1. լրիվությամբ լցված, 2. իսկական, կատարյալ, 3. լրիվությամբ, ամբողջովին), *срок* – *սրոկ* (1. որևէ ժամանակահատված, 2. որևէ բանի հատկացվող ժամկետ, 3. դատարանի որոշմամբ սահմանված բանտարկության ժամկետ), *суд* – *սուդ* (1. դատ, դատաստան, 2. դատարան, 3. դատական նիստ) կամ նաև այլ՝ *очередь* – *օչ(ը)րէդ/ ուչըրէդ* (1. հաջորդական կարգ, դասավորություն, 2. հերթափոխ, 3. որևէ բանի համար իրարից հետո հաջորդական կարգով սպասող մարդկանց խումբ՝ շարք, 4. կրակահերթ), *партия* – *պարտի(ի)յա* (1. քաղաքական կուսակցություն, 2. Խորհրդային Միությունում կոմունիստական կուսակցություն, 3. մեկ ամբողջություն կազմող ընդհանուր խաղի մի մասը, 4. ապրանքների, առարկաների ևն որոշ (սովորաբար մեծ) քանակություն, խումբ), *прямой* – *պըրյամո(յ)* (1. առանց շեղվելու, թեքվելու, այլ տեղ դիմելու, 2. ուղիղ, 3. ուղղակի, 4. շիտակ, 5. առանց թաքցնելու) իմաստներով:

Քիչ չեն նաև այն բառերը, որոնք գործածվում են միայն երկրորդ իմաստով, օրինակ՝ *автомат* – *ափսոմապ/ափսոմամապ* (ինքնաձիգ), *высший* – *վըշի* (հոյակապ, գերազանց, հրաշալի), *горшок* – *գարշոկ* (միզաման, գիշերանոթ), *дек-пет* – *դէկ(ը)րէպ* (ֆիզիոլոգիական արձակուրդ), *здоровый* – *զըղարովի* (թիկնեղ), *коляска* – *կայլասկա* (անվավոր և ճոճվող հարմարանք, որի մեջ քնեցնում կամ զբոսանքի են տանում փոքր երեխաներին), *организм* – *արզանիզմ* (մարդու մարմին), *офицант* – *ափիցանտ* (մատուցող), *палатка* – *պալաթկա* (վրան), *площадь* – *պըլոշաղ/պուլոշաղ* (չկառուցապատված հարթ և ընդարձակ տարածություն քաղաքում կամ գյուղում, հրապարակ), *популярный* – *պապուլյարնի* (հանրահայտ), *пропуск* – *պըրոպուսկ/պուրոպուսկ* (անցագիր, անցաթուղթ), *сок* – *սոկ* (հյութ), *уборная* – *ըբոնի/ուբոնի* (արտաքնոց, պետքարան):

Որոշ բառեր ունեն ռուսերեն համարժեքների երկրորդ ու երրորդ, երբեմն էլ չորրորդ՝ *нежный* – *նէժնի* (նուրբ; փխրուն), *пробка* – *պըրոփկա/պուրոփկա* (անոթների՝ շշերի՝ սրվակների բերանը փակելու հարմարանք, խցան; խցանում), *фронт* – *փըրոնտ/փուրոնտ* (ոազմաճակատ; գործող բանակի մեծ միավորում; ոազմադաշտ), կամ այլ՝ *точный* – *տոչնի* (իսկ և իսկ, ճիշտ և ճիշտ; տեղը տեղին, լրիվությամբ համապատասխան) իմաստները:

Միայն մի քանի բառ գործածվում է երրորդ իմաստով՝ *акт* – *ախտ* (գրավոր պաշտոնական արձանագրություն), *готовый* – *գալովի* (առանց պատվերի պատրաստի վիճակում վաճառվող՝ տրամադրվող), *кооператив* – *կապըրապիվ* (խանութ), *песок* – *պետսկ/պիսոկ* (շաքարավազ), *положение* – *պալաժէնի* (որևէ մեկի կամ որևէ բանի վիճակը՝ դրությունը), *сестра* – *սէստ(ը)րա* (բուժքույր), *целиндр* – *ցիլինդր* (լայնեզր գլանաձև գլխարկ): *Давление* – *դավլէննի* (արյան ճնշում) բառը ռուսերենում *արյան բարձր ճնշում* իմաստով գործածվում է խոսակցական լեզվում, իսկ բարբառում հավասարապես գործածվում է *ճնշում* իմաստին զուգահեռ: *Формальный* – *փարմալնի* (կեղծ, ձևական) բառի իմաստը համընկնում է ռուսերենի հինգերորդ իմաստին: Բարբառում գործածվում է *рожденье* բառի խոսակցական իմաստը, այն է՝ *ծննդյան տարեդարձ, նաև այդ առթիվ կազմակերպված խնջույք*:

Իմաստային քննության տեսանկյունից թերևս ամենահետաքրքրականը փոխառությունների այն խումբն է, որ բարբառում ձեռք է բերել ռուսերենի հետ ինչ-որ կապ ունեցող, բայց բոլորովին նոր իմաստ: Այդպիսի բառերից են՝ *антиквар* – *անթիգա* (աննման, արտասովոր), *гестано* – *գէստաչո* (դաժան մարդ), *заход* – *զախոտ/զախուտ* (արտաքնոց, պետքարան) *кубик* – *կուբիկ* (սպիտակադեղնավուն քարից կտրած ուղղանկյունաձև խորանարդ, որ, որպես շինանյութ, լայն գործածություն ուներ Ղարաբաղում), *нарком* – *նարկոմ* (գեղեցիկ, թիկնեղ, հպարտ կեցվածքով (տղամարդ), *плитка* – *պըլիթկա/պիլիթկա* (շոկոլադե սալիկ), *простав* – *պըրիստավ* (խստապահանջ հետևող), *пункт* – *պունքպ* (բուժկետ) և այլն: Որոշ դեպքերում նոր իմաստի ձեռքբերումը ուղեկցվել է խոսք-իմասային փոխանցմամբ, ինչպես՝ *сущенное /причастие/* – *ըզզուշոննի/զուզուշոննի* բառը բարբառում հանդես է գալիս որպես գոյական և նշանակում է

*խրացրած կաթ, подавать /глагол/ – պահավապ* -ը գոյական է և ունի *պաշտոնական անձանց սպասարկող մեքենա* իմաստը, *четверть /числительное/ – չէրվեր/չէթվէռ* բառը գոյական է և ունի ռուսերենից տարբեր երկու իմաստներ՝ 1. *փարողության չափ, որ հավասար է չորս լիտրի*, 2. *այդպիսի փարողությամբ աման՝ շիշ*: *Գալուստիկավեր* բառը կազմվել է ռուսերենից փոխառյալ *галстук* արմատի ու հայերեն *-ավեր* ածանցի համադրությամբ և բարբառում ունի նոր իմաստ՝ *պաշտոնյա*:

Իմաստափոխության մյուս արտահայտությունը բառիմաստի ընդլայնումն է, երբ բարբառում ռուսերենից փոխառյալ բառը ռուսերենի իմաստին զուգահեռ ձեռք է բերել նոր իմաստ: Այսպես, *мрамор – մըրամըր* (մարմար) բառը ունի նաև երկու նոր իմաստ՝ 1. *ողորկ, փայլուն, սպիտակ*, 2. *ընտիր, սպիտակ հատիկներով* (ցորենի մասին), *тюрьма – փուրմա* (բանտ) բառը նշանակում է նաև 1. *բանտարկություն*, 2. *սպրելու համար ծանր, փաժանելի փեղ, стол – ըսրոլ* (սեղան) բառը՝ նաև *աթոռ* և այլն:

Բառիմաստի ընդլայնում ունեն նաև այն բառերը, որոնց առաջին՝ հիմնական իմաստը համընկնում է ռուսերենի իմաստին, բայց դրանք բարբառում ձեռք են բերել նաև փոխաբերական իմաստ, ինչպես՝ *армуст – արփիսր* (1. դերասան, 2. *փխբ.* կեղծող, ձևացնող), *кыкла – կուկ(ը)լա* (1. տիկնիկ, 2. *փխբ.* շատ գեղեցիկ (աղջիկ, երեխա), *мама – մամա* (1. մայր, 2. *փխբ.* ամենալավ դեղը՝ դարմանը՝ հակազդողը), *немец – նեմէց* (1. գերմանացի, 2. *փխբ.* խիստ դաժան (մարդ), *нотариус – լադարյոս/նափարյուս* (1. նոտար, 2. *փխբ.* անառարկելի, անվիճելի ճշմարտություն), *открытка – աթկըրիթկա* (1. բացիկ, 2. *փխբ.* շատ գեղեցիկ), *тормоз – փորմուզ* (1. մեքենայի շարժումը դանդաղեցնող՝ կասեցնող հարմարանք՝ արգելակ, 2. *փխբ.* շատ դանդաղաշարժ (մարդ), 3. *փխբ.* դանդաղ մտածող (մարդ), *чугун – չուգուն* (1. երկաթի և ածխածնի միահալույթ՝ թուջ, 2. *փխբ.* շատ ամուր, կարծր, 3. *փխբ.* կոշտ, կոպիտ), *шоколад – շագալաթ* (1. շոկոլադ, 2. *փխբ.* շատ քաղցր), *material – մափարյալ/մափէրյալ* (1. շինանյութ, 2. *փխբ.* անստորագիր գրություն՝ գրպարտագիր): Վերջին բառից կազմված *մափէրիալիսր* բառի՝ բարբառում ունեցած իմաստի հիմքում ընկած է այդ բառի փոխաբերական իմաստը. բառը նշանակում է *գրպարտագրեր գրող*, իսկ ռուսերենի իմաստները՝ 1. *последователь материализма*, 2. *человек, относящийся к действительности реалистически*, 3. *человек, крайне практичный по своим интересам*, բարբառում չկան:

Բառիմաստի ընդլայնում է նաև հատուկ անունների հասարակացումը, օրինակ՝ «*Дружба*» (марка бензопилы) – *դըրրուժրա* բառը բարբառում նշանակում է *էլեկտրական կամ ներքին այրման շարժիչով աշխատող սղոց*, *Сибирь – սիբիր* բառը՝ *շափ ցուրպ*:

### Փոխառյալ բառերի իմաստափոխության հիմունքները

Յուրաքանչյուր իմաստափոխության հիմքում լինում է որևէ պատճառ, որով պայմանավորված է լինում նոր իմաստի առաջացումը: Բարբառում կարևոր են ռուսերենից փոխառյալ բառերի իմաստափոխության երկու հիմունքներ:

1. *Իմաստափոխություն նմանության հիմունքով*: Արտաքին նմանության հիմունքով իմաստափոխվել են մի շարք բառեր, ինչպես՝ *балбес* (бестолковый, грубый и неотесанный человек) – *բալբազ* (մեծ ու դանդաղաշարժ ոչխար), *бомбовоз* (бомбардировщик) – *բամբալօզ* (շատ գեր, հսկայամարմին), *карточка* (небольшой прямоугольный кусок бумаги, картона) – *կարտիշկա* (շատ գեղեցիկ): Ներքին նմանությամբ իմաստափոխվել են *котелок* (большой металлический сосуд для еды) – *կարիլօկ* (*արիմ*. մարդու գլուխ), *субботник* (общественная неоплачиваемая работа) – *սուբօտնիկ* (քիչ թե շատ մեծ մասշտաբի մաքրություն) և այլ բառեր:

2. *Իմաստափոխություն նույն գործառույթը կատարելու հիմունքով*: Այսպես, *завод* – *զավօդ* բառը բարբառում նշանակում է նաև *օղեթորման սարք*՝ այն հիմունքով, որ դրա միջոցով օղի են պատրաստում, *клапан* – *կրլապան* բառի երկու իմաստներն էլ՝ 1. *կալը քամուց պաշտպանվելու շինվածք*, 2. *անրգ. մարդու բերան*, ենթադրում են փակելու, ծածկելու գործառույթ, *мотор* – *մալօր* բառը նշանակում է նաև *շար շարժվող՝ աշխատող մարդ, холодильник* – *խալդէլնիկ* բառը՝ *օղեթորման սարքի օղակաձև խողովակ, որը սառեցնելու գործառույթ է կատարում* և այլն:

### Փոխառյալ բաղադրիչով դարձվածների տեսակներն ըստ դարձվածի իմաստի՝ բաղադրիչների իմաստներից կախվածության աստիճանի

Իմաստափոխության դրսևորում պետք է համարել նաև Ղարաբաղի բարբառի՝ ռուսերենից փոխառյալ բաղադրիչ ունեցող դարձվածները, որոնք, ինչպես և հատուկ է դարձվածներին, վերաիմաստավորված են: Պետք է նշել, որ դրանք հիմնականում կազմված են փոխառյալ և հայերեն բաղադրիչներից. միայն փոխառյալ բաղադրիչներից կազմված դարձվածները քիչ են, որոնցից որոշներն ուղղակի ռուսերենից փոխառված միավորներ են և նույն իմաստով էլ գործածվում են բարբառում՝ ինչպես՝ *ноль внимания* (полное отсутствие интереса или невнимание к чему-либо или кому-либо) – *նօլ վրնիմաննի* (բացարձակ անտարբերություն), *тютелька в тютельку* (совершенно точно, точно-в-точь) – *ժուժուկ նա ժուժուկ* (լիարժեք համընկնում, չափի առումով լրիվ ճիշտ): *Чашка* – *կապէկ* (կոպեկ առ կոպեկ, քիչ-քիչ) դարձվածի համարժեքը ռուսերենում կա՝ *копейка в копейку* (совершенно точно, точь-в-точь), բայց դարձվածների իմաստները լրիվ տարբեր են: *Униформа* *աթկազ* արտահայտությունը բարբառում դարձվածի արժեք ունի և նշանակում է *լրիվ՝ կտրուկ մերժում*, մինչդեռ ռուսերենում *сухой отказ* արտահայտությունը չի համարվում համընդհանուր գործածություն ունեցող կայուն կապակցություն:

Քանի որ դարձվածները քննվում են իմաստաբանության դաշտում, ճիշտ ենք համարում դրանք ներկայացնել ըստ դարձվածի իմաստի՝ բաղադրիչների իմաստներից կախվածության աստիճանի: Ըստ այդմ՝ ունենք դարձվածային կապակցություններ, դարձվածային միասնություններ և դարձվածային սերտաճումներ:

Դարձվածային կապակցության «ընդհանուր իմաստը բխում է կապակցություն կազմող բաղադրիչների բառային իմաստների գումարից» (Բաղիկյան 1986, 59): Այս դարձվածների մեծ մասը բայական հարադրություններ են՝ ռուսերեն անվանական և հայերեն բայական բաղադրիչով, ինչպես՝ *закуску – զակուսկի անէլ* (մի քիչ ուտել), *карантин – կըրախիտին/կարանիտին անէլ/տիինիլ* (արգելք դնել, արգելել), *карты – կարտե/կարտի տալ* (թղթախաղով զբաղվել), *квит – կըվիտ անէլ* (իրար նկատմամբ ունեցած պարտականությունները կատարած լինել), *клизма – կըլիզմա անէլ* (պատժել), *копейка – կապեկ չարժիլ* (անարժեք լինել), *крахмал – կըրախմալ տալ* (օսլայել), *руль – ռուլիտ անէլ* (կառավարել), *тыда-сюда – տուդի – սուդի անէլ* (այս ու այն կողմ ընկնել), *тюрьма – տուրմա ընգնէլ* (բանտարկվել), *фонтан – փանտան անէլ/թըխէլ/տալ* (ժայթքել), *честь – չէստ տալ* (կուրորեն ենթարկվել) և այլն:

Կան նաև բառակապակցության կառուցվածք ունեցող դարձվածային կապակցություններ՝ *газета – կազէթ քըցիլ* (լրագրի նյութ դարձնել, հանրայնորեն քննարկել), *ЗАГС – զաքս քինիլ* (ամուսնությունը զագսում գրանցել), *контракт – կանդ(ը)րախտ կապէլ* (պայմանագիր կնքել), *лотерея – լատարէյը ընգնէլ* (շահած լինել), *Сибирь – Սիբիր դարկէլ/քըշիլ* (աքսորել), *стакан – ըստաքան պիցըրընէլ* (կենաց առաջարկել), *фетская թըխէլ/տիինիլ* (կնիք դնել, հաստատել), *чун – չինէրը վէր օնէլ* (աստիճանից՝ կոչումից պաշտոնից զրկել) և այլն:

Դարձվածային միասնությունների իմաստների՝ բաղադրիչների իմաստներից կախվածության աստիճանը ավելի թույլ է: Այսպիսի դարձվածները բարբառում միայն բառակապակցության կառուցվածք ունեն, ինչպես՝ *вешь – վէշէրը հըվաքէլ* (հեռանալ, գաղթել), *карта – կարտէրը խառնէլ* (մեկի ծրագրերը խառնել), *кляпан – կըլպանը կապէլ* (1. լռել, 2. լռեցնել), *обруч – օբրուչը պընդըրընէլ* (հաստատուն դարձնել, կայունացնել), *стол – ըստուլէն (յլ՛րէ) կըլխէն նըստըրըրնէլ* (հարգել, պատվել), *руфուլէն յըրա մընալ* (վիրահատության ժամանակ մեռնել), *руфուլը թըքանալ* (խնջույքը աշխուժանալ) և այլն:

Դարձվածային սերտաճումների «բոլոր բաղադրիչներն էլ իմաստափոխված են. կապակցության ընդհանուր իմաստը չի համապատասխանում բաղադրիչների իմաստին և չի բխում նրանց իմաստների գումարից» (Բաղիկյան 1986, 57): Այդպիսի դարձվածներից են՝ *почта – փօշտու թընըկաման* (անբարոյական կին), *փօշտու ծօրէ* (շատ չարչարվող մարդ), *ярлык – յառլիգ՛ը/յառլիկը պոք տըված* (կուսությունից զրկված), *комсомол – կամսամուլէն գընիշկան կուռնըրպակէն* (կույս (նորահարսի մասին), *пружина – պըրուժիննէն բօշ/թյով* (խելապակաս), *чашка-ложка – չաշկա – լօշկա անէլ* (սիրաբանել) և այլն:

### **Եզրակացություններ**

Հայերենի յուրաքանչյուր բարբառ ունի տարբեր լեզուներից փոխառված բառեր, որոնք՝ որպես կենդանի լեզվի բաղադրիչներ, ենթակա են իմաստափոխության: Ղարաբաղի բարբառում առավել շատ են ռուսերենից (ներառյալ ռուսերենի միջնորդությամբ այլ լեզուներից) անցած բառերը: Համեմատելով ռուսերենից փոխառյալ բառերի իմաստները Ղարաբաղի բարբառում՝ առանձնացրել ենք հետևյալ խմբերը՝ իմաստային որևէ փոփոխության չենթարկված, բառիմաստի նեղացման ու ընդլայնման ենթարկված և նոր իմաստ ձեռք բերած բառեր: Ռուսերենի համեմատությամբ նույն իմաստն ունեցող բառերը կարող են լինել ինչպես մենիմաստ, այնպես էլ բազմիմաստ: Բառիմաստի նեղացման ենթարկված բառերը մեծ մասամբ պահպանում են առաջին իմաստը, որի հետ համատեղ կարող են գործածվել նաև երկրորդ, երրորդ կամ այլ իմաստներով: Որոշ բառեր գործածվում են միայն երկրորդ կամ երրորդ իմաստներով: Բառիմաստի ընդլայնում ունեն այն բառերը, որոնց առաջին՝ հիմնական իմաստը համընկնում է ռուսերենի իմաստին, բայց բարբառում ձեռք են բերել նաև փոխաբերական իմաստ: Այս իրողությունը զիջում է բառիմաստի նեղացմանը: Իմաստային քննության տեսակետից ամենահետաքրքիրը բառերի այն խումբն է, որ ձեռք է բերել ռուսերենի հետ կապ ունեցող, բայց բոլորովին այլ իմաստ:

Իմաստափոխված փոխառյալ բառերը քննել ենք նաև ըստ իմաստափոխության հիմունքների. կան արտաքին ու ներքին նմանությամբ և նույն գործառույթը կատարելու հիմունքով իմաստափոխված բառեր:

Փոխառյալ բաղադրիչով բարբառային դարձվածները ներկայացված են հաշվի առնելով դարձվածի՝ վերահիմաստավորված լեզվական միավոր լինելը, ընդ որում, դարձվածները ուսումնասիրել ենք ըստ դարձվածի իմաստի՝ բաղադրիչների իմաստներից կախվածության աստիճանի:

### **Շնորհակալական**

Սույն հոդվածը գրելու ընթացքում տրամադրած տեղեկությունների, օգտակար դիտողությունների և խորհուրդների համար շնորհակալություն ենք հայտնում Բ.Գ.Դ. Վիկտոր Կատվայանին և Բ.Գ.Դ. Լավրենտի Հովհաննիսյանին: Հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ տրամադրած ֆինանսական աջակցությամբ՝ 24SSAH-6B016 նախագծի շրջանակում:

### **Գրականություն/References/Литература**

1. Աճառեան Հր. 1911, Հայ բարբառագիտութիւն. ուրուագիծ եւ դասավորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով), Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա-Նոր Նախիջևան, Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց հրատ.: Acharyan H. 1911, Armenian Dialectology: Outline and Classification of Armenian Dialects (with a Dialectological Map), Eminian Ethnographic Collection, vol. 8, Moscow-Nor Nakhichevan, Lazarian Seminary Press (in Armenian).

2. Ավետիսյան Յու., Թելյան Լ., Սարգսյան Լ. 2020, Արդի հայերենի բառապաշարը, Երևան, ԵՊՀ հրատ.:  
Avetisyan Yu., Telyan L., Sargsyan, L. 2020, The Vocabulary of Modern Armenian, Yerevan, YSU Press (in Armenian).
3. Բադիկյան Խ. 1986, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:  
Badikyan Kh. 1986, Phraseological Units of Modern Armenian, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR (in Armenian).
4. Դավթյան Կ. 1966, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Երևան, ՀՍՍՌ-ԳԱ հրատ.:  
Davtyan K. 1966, Dialect Map of Mountainous Karabakh, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR (in Armenian).
5. Ղարիբյան Ա. 1939, Հայերեն բարբառների մի նոր ճյուղ, Երևան, ԵՊՀ հրատ.:  
Gharibyan A. 1939, A New Branch of Armenian Dialects, Yerevan, YSU Publishing House (in Armenian).
6. Ղարիբյան Ա. 1947, Հայ բարբառագիտություն, Երևան, Հայաստանի մանկավարժական ինստիտուտի հրատ.:  
Gharibyan A. 1947, Armenian Dialectology, Yerevan, Publishing House of the Pedagogical Institute of Armenia (in Armenian).
7. Մինասյան Շ. 2007, Ղարաբաղի բարբառի դարձվածները, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս»:  
Minasyan Sh. 2007, The Idioms of the Karabakh Dialect, Stepanakert, Dizak Plus (in Armenian).
8. Պողոսյան Ա. 1965, Հադրուֆի բարբառը, Երևան, ՀՍՍՌ-ԳԱ հրատ.:  
Poghosyan A. 1965, The Dialect of Hadrut, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR (in Armenian).
9. Ջահուկյան Գ. 1972, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:  
Jahukyan G. 1972, Introduction to Armenian Dialectology, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR (in Armenian).
10. Սարգսյան Ա. 2009, Շաղախի ենթաբարբառը Հադրուֆի ենթաբարբառի միջավայրում, Ստեփանակերտ, Արցախի պետական համալսարան:  
Sargsyan A. 2009, The Shaghakh Subdialect in the Environment of the Hadrut Subdialect, Stepanakert, Artsakh State University (in Armenian).
11. Սարգսյան Ա. 2013, Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, «Էդիթ Պրինտ»:  
Sargsyan A. 2013, Dictionary of the Karabakh Dialect, Yerevan, Edit Print (in Armenian).
12. Սարգսյան Ա., Մինասյան Շ. 2017, Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարան, Երևան, «Էդիթ Պրինտ»:  
Sargsyan A., Minasyan Sh. 2017, Phraseological Dictionary of the Karabakh Dialect, Yerevan, Edit Print (in Armenian).
13. Սարգսյան Ա. 2019, Մատենագիտություն Ղարաբաղի բարբառի ուսումնասիրության, Երևան, «Էդիթ Պրինտ»:

- Sargsyan A. 2019, Bibliography of the Study of the Karabakh Dialect, Yerevan, Edit Print (in Armenian).
14. Սարգսյան Ա., Մինասյան Շ. 2025, Ղարաբաղի բարբառ. Արդի վիճակը և պահպանման հեռանկարները, Հայ բանասիրության հեռանկարներ. Ուսումնասիրության և ուսուցման արդի խնդիրներ. Ժողովածու, Լոս Անջելես-Երևան, ԱՄՆ Արևմտյան թեմի հրատ., 57–71:  
Sargsyan A., Minasyan Sh. 2025, The Karabakh Dialect: Current State and Prospects for Preservation, Perspectives of Armenian Philology: Modern Issues of Study and Teaching, Los Angeles–Yerevan, Western Diocese of the Armenian Church of America Press, 57–71 (in Armenian).
15. Адонц Н. 1915, Дионисий Фракийский и армянские толкователи, Санкт-Петербург, тип. Императорской академии наук.  
Adonts N. 1915, Dionysius Thrax and the Armenian Commentators, St. Petersburg, Printing House of the Imperial Academy of Sciences (in Russian).
16. Ожегов С. 2018, Толковый словарь русского языка, Москва, «Мир и образование».  
Ozhegov S. 2018, Explanatory Dictionary of the Russian Language, Moscow, Mir i Obrazovanie (in Russian).
17. Патканов К. 1869, Исследование о диалектах армянского языка, Санкт-Петербург, тип. Императорской академии наук.  
Patkanov K. 1869, A Study of the Dialects of the Armenian Language, St. Petersburg, Printing House of the Imperial Academy of Sciences (in Russian).